«Այբ» կրթական հիմնադրամ
Երևան 0009, Կորյունի 19ա
Հեռ.՝ +374 10 54 37 07, +374 98 54 37 07
info@ayb.am
www.foundation.ayb.am

24 մայիսի, 2018 թ.

Հայտարարություն

«Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն իր խիստ մտահոգությունն է արտահայտում ս. թ. մայիսի 22-ին ՀՀ ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանի՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր անձնական էջում կատարած հայտարարության վերաբերյալ (մեջբերում). «Այբի հետ կապված... Հարգելիներս, այսօր հանձնարարել եմ կազմակերպել ֆինանսական աուդիտ: Դրա արդյունքներից հետո կխոսենք: Շարունակում եմ համարել, որ Տեր Մեսրոպը հանրակրթության ոլորտին ամենամեծ վնասը հասցրած մարդկանցից է: Այսքանը...»:

Տեղեկացնում ենք, որ ՀՀ ԿԳ նախարարի 2018 թ. մայիսի 21-ի N 373-Ա հրամանով հանձնարարվել է (մեջբերում). ««Այբ» կրթական հիմնադրամում «Կրթության գերազանցության ազգային ծրագրի իրականացում» ծրագրի նախնական և ընթացիկ արդյունքների համապատասխանության գնահատման ուսումնասիրություն» իրականացնել, մինչդեռ ուսումնասիրությունը հանրային հարթակում ներկայացվել է որպես ֆինանսական աուդիտ:

Մասնավորապես մտահոգված ենք այն հանգամանքով, որ, դեռևս չունենալով ուսումնասիրության եզրակացությունը, տրվում է կանխակալ որակում, որն ամենայն հավանականությամբ կարող է բացասական ազդեցություն ունենալ ստացվելիք եզրակացության անաչառության և օբյեկտիվության վրա: Առավել ևս, երբ ուսումնասիրությունն իրականացվում է նախարարության կողմից, այլ ոչ՝ անկախ երրորդ կողմի: Ուստի առկա են լրջագույն կասկածներ, որ տրվելիք եզրակացությունը բխելու է նախարարի արդեն իսկ արած հայտարարության ենթատեքստից: Նախարարի հայտարարությունները և գնահատականները պետք է հնչեն միայն ուսումնասիրությունից հետո և հնչեն միայն հարցի առարկա Կրթության գերազանցության ազգային ծրագրի վերաբերյալ, այլ ոչ ընդհանրական՝ «Այբ»-ի:

Միաժամանակ փաստում ենք, որ «Այբ» կրթական հիմնադրամը, օրենքով սահմանված կարգով, յուրաքանչյուր տարի անցնում է անկախ ֆինանսական աուդիտ: Ֆինանսական աուդիտը վերջին երկու տարիներին իրականացվել է «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից: Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը և ֆինանսական հաշվետվությունը սահմանված կարգով հրապարակված են ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում՝ azdarar.am (https://www.azdarar.am/announcments/org/131/00373041/ հղումով), ինչպես նաև «Այբ» կրթական հիմնադրամի կայքում՝ https://foundation.ayb.am/en/reports հղումով:

Մտահոգիչ է, որ նախարարն իր ընդհանրացված հայտարարությամբ, առանց ճշտված տեղեկությունների, կանխակալ բացասական կարծիք է ստեղծում «Այբ»-ի ողջ գործունեության և համայնքի անդամների վերաբերյալ:

Հորդորում ենք ապագայում զերծ մնալ վիրավորանքներից, անձանց պատիվն ու արժանապատվությունն արատավորելուց, ինչպես նաև հանրային այնպիսի հայտարարություններից, որոնք կարող են ստվեր նետել մասնագիտական եզրակացությունների վրա:

«Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

Դավիթ Յան
Դավիթ Փախչանյան
Լևոն Ղազարյան
Կարեն Մուսաելյան
Ռուբեն Հարությունյան
Վարդան Բաբիկյան

Խորհրդի նախագահ՝

Կարո Սարգսյան